Տեղեկանք

<<Հայոց պատմություն>> առարկայի 6-9-րդ դասարանների չափորոշչում և ծրագրում կատարված փոփոխությունների վերաբերյալ

Առարկայի գործող չափորոշիչը և ծրագիրը հաստատվել են 2008 թ-ին: Այդ ժամանակից սկսած ԿԱԻ-ի և նրա մասնաճյուղերի պատմության մասնագետների կողմից պարբերաբար իրականացվել են մշտադիտարկումներ Երևան քաղաքի և հանրապետության մարզերի մի շարք հանրակրթական դպրոցներում: Մշտադիտարկումներից հետո կազմակերպվել են քննարկումներ և սեմինարներ ուսուցիչների հետ պետական չափորոշչին և առարկայի ծրագրային պահանջներին գործող ծրագրի և դասագրքերի համապատասխանության, դրանք ուսուցման գործընթացում արդյունավետ կիրառելու կարողությունների ու հմտությունների շուրջ:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ինչպես առարկայի չափորոշիչը, այնպես էլ ծրագիրը ունի լրամշակման և բեռնաթափման կարիք: Թեմաների զգալի մասը խիստ ծավալուն է, շարադրված է բարդ և խրթին լեզվով, չի համապատասխանում տվյալ խմբի սովորողների տարիքային, հոգեբանական և ֆիզոլոգիական առանձնահատկություններին:

Ա. Չափորոշչում կատարված փոփոխություններ

Չափորոշչային փոփոխությունները կատարվել են թեմաների բեռնաթափման և կրճատման, թեմաների միավորման և խոշորացման, ձևակերպումների կոնկրետացման և հստակեցման, անհարկի կրկնությունները վերացնելու, թեմաների ժամանակագրական և թեմատիկ խմբավորման սկզբունքներին համապատասխան:

Ստորև ներկայացնում ենք չափորոշիչում կատարված փոփոխությունները.

1) Գործող չափորոշիչը հստակեցվել է ըստ բաժինների և ըստ թեմաների:

2) Գործող չափորոշչում որոշ թեմաների վերաբերյալ չկային սովորողների պատրաստվածությանը եռամակարդակ պահանջներ. լրամշակված տարբերակում եռամակարդակ պահանջները ընդգրկում են առարկայի բովանդակային միջուկի բոլոր թեմաները: Օրինակ՝ <<Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն>> թեման չի ունեցել գիտելիքների Բ, Գ մակարդակ, կարողությունների ու հմտությունների Ա մակարդակ և այլն:

3) Հստակեցվել է գիտելիքների և կարողությունների խառնաշփոթը՝ երբ գիտելիքը ներկայացվել է որպես կարողություն, հմտություն, իսկ կարողությունն ու հմտությունը՝ գիտելիք: Օրինակ՝ կարողանա ներկայացնել 1921 թ.-ի փետրվարյան ապստամբության պատճառները և այլն:

4) Ա մակարդակում տրված բարդ պահանջները պարզեցվել են կամ տեղափոխվել են երկրորդ ու երրորդ մակարդակ և ընդհակառակը: Օրինակ՝ տերմինների, հասկացությունների և գաղափարների բացատրությունը, որը ավելի բարձր մակարդակ է պահանջում, տեղափոխվել են Բ կամ Գ մակարդակներ:

5) Խմբագրվել են չափորոշչային որոշ ձևակերպումներ: Օրինակ՝ <<գործակալությունների գործառույթների շրջանակը>> վերաձևակերպվել է <<գործակալությունների գործառույթները>>:

Բ. Ծրագրում կատարված փոփոխություններ

Ծրագրային փոփոխությունները կատարվել են հետևյալ սկզբունքներով՝

ա) թեմաների բեռնաթափում և կրճատում,
բ) թեմաների միավորում և խոշորացում,
գ) ձևակերպումների հստակեցում և պարզեցում,
դ) անհարկի կրկնությունները վերացնելու
ե) թեմաների ժամանակագրական և թեմատիկ խմբավորում:

Բեռնաթփման արդյունքում յուրաքանչյուր դասարանում տնտեսվել են դասաժամեր՝ 6 – րդ դասարանում՝ 3 ժամ, 7 – րդ դասարանում՝ 2 ժամ, 8 – րդում՝ 3 ժամ, 9 – րդում՝ 2 ժամ: Դրանք տրամադրվել են կրկնությանը և ամփոփմանը, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ կիրառել գնահատման նոր համակարգը, ուսուցանող և միավորային գնահատման տարբեր տեսակները:

Ստորև ներկայացնում ենք կատարված ծրագրային փոփոխություններն ըստ դասարանների.

6-րդ դասարան՝

1) <<Նախնադարյան հասարակությունը Հայկական լեռնաշխարհում>>, <<Հայ ժողովրդի կազմավորումը>>, <<Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները Ք.ա III հազարամյակից մինչև Ք.ա I հազարամյակի սկզբները>> թեմաները միավորվել են <<Հայկական լեռնաշխարհը որպես մարդկության հնագույն բնօրրան: Հնագույն պետական կազմավորումները>> թեմայի մեջ:

2) <<Վանի թագավորությունը >> թեման բերվել է երկրորդ բաժնի սկիզբը, քանի որ Վանի թագավորությամբ է սկսվում Հայոց հին շրջանի պատմությունը: <<Վանի թագավորության մշակույթը>> միացվել է <<Հին Հայաստանի մշակույթը>> թեմայի հետ, որպեսզի Վանի թագավորության մշակույթը դիտվի հայկական մշակույթ: <<Հայկազունի Երվանդականների թագավորությունը>> թեմայից կրճատվել են <<Հայ մարական հարաբերությունները, հայ-պարսկակն ռազմական դաշինքը>>, <<Հայկական հողերի միավորումը>> ենթահարցերը, իսկ մյուսները միավորվել են <<Հայաստանը և Աքեմենյանները>> ենթահարցի մեջ:

3) <<Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորությունը>> թեմայում <<Արտաշեսի բարենորոգումների նշանակությունը>>, <<Մայրաքաղաքներ Արտաշատի և Տիգրանակերտի կառուցումը>>, << Լուկուլլոսի և Պոմպեոսի արշավանքները>> խմբավորվել են մեկ ենթահարցի մեջ:

4) Պարզեցվել և բեռնաթափվել են <<Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը>>, <<Հին Հայաստանի հասարակական- տնտեսական կյանքը, պետական կարգը>>, <<Հին Հայաստանի մշակույթը>> թեմաները:

7-րդ դասարան՝

1) բարդության պատճառով կրճատվել են Բաժին 1-ի <<Ավատատիրության հաստատումը Հայաստանում>> և <<Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն>> թեմաները:

2) <<Հայ մշակույթի ոսկեդարը>> թեման միավորվել է <<Հայկական մշակույթը 6-9 րդ դդ.-ում>> թեմայի հետ և վերանվանվել է <<Հայկական մշակույթը 5-9-րդ դդ.-ում>>:

3) <<Հայաստանը 6-7-րդ դդ.-ում>>, <<Հայաստանը Արաբական խալիֆայության կազմում>> թեմաները միավորվել են մեկ՝ <<Հայաստանը 6-9-րդ դդ.-ում>> թեմայի մեջ և զգալիորեն կրճատվել՝ ավելորդ մանրամասներից խուսափելու նպատակով:

4) Բաժին 3-ում միավորվել են <<Հայաստանը 14-15-րդ դդ.-ում>> թեման և <<Քաղաքական իրադրությունը 16-րդ սկզբին >> ենթաթեման, իսկ թեման վերանվանվել է՝ <<Հայաստանը 14-16-րդ դդ.-ում>>: Նկատի ունենալով թեմայի բարդությունը՝ <<Հայկական գաղթավայրերը>> թեման տեղափոխվել է 8-րդ դասարան և միավորվել <<Հայկական գաղթավայրերը մինչև 20-րդ դ.-ի սկիզբը>> թեմայի հետ:

8-րդ դասարան՝

1) Առաջին բաժինը <<Ազատագրական պայքարի նոր փուլը 17-րդ դ.-ի երկրորդ կեսին և 18-րդ դ.-ի առաջին կեսին>> միավորվել է երկրորդ բաժնի հետ և ժամանակագրական առումով հասցվել է մինչև 19-րդ դարի կեսը:

2) <<Հայկական մշակույթը 17-րդ դ.-ի երկրորդ կեսին և 18-րդ դ.-ում>> թեման տեղափոխվում է երկրորդ բաժին և միացվել <<Հայկական մշակույթը 19-րդ դ.-ի առաջին կեսին>> թեմայի հետ և վերանվանվել <<Հայկական մշակույթը 17-րդ դ.-ի երկրորդ կեսից մինչև 19-րդ դարի առաջին կեսը>>՝ ավելորդ կրկնություններից խուսափելու և բեռնաթափելու նպատակով:

3) Բաժին երրորդի <<Հայ ազատագրական պայքարի աշխուժացումը>>, <<Հայ ազգային կուսակցությունների առաջացումը և գործունեությունը>>, <<Հայդուկային շարժման առաջացումը և ծավալումը>>, <<Արևմտահայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը 90-ական թթ.-ին>> թեմաները միավորվել են նոր՝ <<Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 19-րդ դ.-ի 70-90-ական թթ.-ին>> թեմայի մեջ՝ ավելորդ մանրամասնություններից խուսափելու նպատակով:

4) <<Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմում>>, որին ավելացվել է <<Արևմտյան Հայաստանը օսմանյան Թուրքիայի կազմում>> ենթահարցը տեղափոխվել է նույն բաժնի <<Ազգային, հասարակական-քաղաքական շարժումները>> թեմայից հետո:

5) <<Հայաստանը 20-րդ դ.-ի սկզբին>> չորրորդ բաժինը վերաձևակերպվել է <<Հայաստանը 20-րդ դ.-ի սկզբից մինչև 1918 թ.-ի մայիսը>> բաժնի: Այդ վերաձևակերպումը հնարավորություն է տվել կրճատել <<Հայ ժողովուրդը առաջին աշխարհամարտի տարիներին>> և <<Հայաստանը անկախության վերականգման ճանապարհին>> առանձին բաժինները՝ էական բեռնաթափման և գործող պարբերացմանը համապատասխանեցնելու նպատակով:

9-րդ դասարան՝

1) Կրճատվել են Բաժին երկրորդի <<Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը>>, <<Խորհրդային Հայաստանի տարածքների հիմնախնդիրները և արտաքին կապերը>>, <<Սոցիալ- տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքը Խորհրդային Հայաստանում 1922-1941 թթ.-ին>> թեմանյերը՝ փաստական գերբեռնված ծավալը կրճատելու նպատակով:

2) <<Հայկական սփյուռքը 1920 թ.-ից միչև մեր օրերը>> բաժինը հանվել է, դրա փոխարեն կազմվել է երեք թեմա՝ <<Հայկական սփյուռքի ձևավորումը>>, <<Հայկական սփյուռքը հետպատերազմյան տարիներին>>, <<Հայկական սփյուռքը 1991 թ.-ից մինչև մեր օրերը>>, որոնք միավորվել են համապատասխան ժամանակաշրջանի թեմաների հետ նույն բաժնում՝ ուսուցման համաժամանակությունը, հայրենիքը և սփյուռքը մեկ միասնության մեջ տեսնելու և ավելորդ կրկնություններից խուսափելու նպատակով: